

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

\_\_\_\_\_ 2021թ.

N \_\_\_\_\_-Ն

## Ո Ր Ո Շ Մ Ա Ն

### ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N312-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի առաջարկը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով.

#### Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հոկտեմբերի 24-ի «Երևան քաղաքում ընտանի կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները հաստատելու մասին» N 312-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Երևան քաղաքում տնային կենդանիների պահման կանոնները հաստատելու մասին».

2) Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի նոյեմբերի 1-ից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հավելված  
Երևան քաղաքի ավագանու  
\_\_\_\_\_թվականի \_\_\_\_\_-ի  
N \_\_\_\_\_-Ն որոշման

«Հավելված  
Երևան քաղաքի ավագանու  
2011 թվականի հոկտեմբերի 24-ի  
N 312-Ն որոշման

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏՆԱՅԻՆ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ՊԱՀՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոններով (այսուհետ՝ Կանոններ) կարգավորվում են Երևան քաղաքում տնային կենդանիներին (այսուհետ՝ Կենդանի) պահելու, հաշվառելու և անասնաբուժական սպասարկում իրականացնելու հետ կապված հարաբերությունները: Սույն Կանոնների դրույթները տարածվում են Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող տնային կենդանիներ պահող ֆիզիկական և իրավաբանական անձանց վրա:

2. Կանոնները չեն տարածվում գիտական, գիտահետազոտական, բժշկական, ինչպես նաև ծառայողական նպատակներով տնային կենդանիներին տիրապետող կամ օգտագործող կամ խնամող (պահող) համապատասխան թույլտվություն ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց վրա:

3. Սույն Կանոնների իմաստով օգտագործվում են «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3 հոդվածով սահմանված և հետևյալ հիմնական հասկացությունները՝

1) **տնային կենդանիներ**՝ սույն Կանոնների իմաստով հասկացությունը կիրառելի է միայն շների և կատուների համար:

2) **տնային կենդանի պահող** (այսուհետ՝ Պահող)՝ իրեն պատկանող տարածքում կենդանուն կերակրող, կամ խնամող, կամ վարժեցնող, կամ բուծող, կամ բժշկող, կամ հսկող ֆիզիկական կամ իրավաբանական անձ:

3) **տնային կենդանիների նույնականացում**՝ տնային կենդանիների վրա ամրացված նույնականացման յուրահատուկ, չկրկնվող համարներին համապատասխան Կենդանիների հաշվառման էլեկտրոնային տեղեկատվական համակարգում Կենդանիների մասին տվյալների հաշվառում, ինչը հնարավորություն է ընձեռում անհատականացնել կենդանիներին: Տնային կենդանիների վրա նույնականացման յուրահատուկ, չկրկնվող համարներն ամրացվում են անասնաբույժի կամ անասնաբուժական ծառայության միջոցով՝ կենդանու մարմնի որոշակի մասում ծածկագրավորված տեղեկություն պարունակող հատուկ էլեկտրոնային միկրոչիպի՝ կրիչի ներարկման կամ դաջվածքի միջոցով: Դաջվածքի կիրառման դեպքում նույնականացման համարը տրամադրվում է համայնքային կազմակերպության կողմից:

4) **տնային կենդանիների հաշվառում**՝ անասնաբույժի կամ անասնաբուժական ծառայության միջոցով տնային կենդանիների նույնականացման և անասնաբուժական զննության իրականացում, որոնց արդյունքում տրվում է անասնաբուժական անձնագիր:

5) **անասնաբուժական անձնագիր**՝ կենդանու նույնականացման և նրա անասնաբուժական զննության, պահանջվող պատվաստումների իրականացման մասին անհրաժեշտ տեղեկություններ պարունակող, սույն Կանոնների Զև 1-ով սահմանված ձևաչափի փաստաթուղթ, որը տրվում է անասնաբույժի կողմից:

6) **տնային կենդանիներ պահելու թույլտվություն**՝ համապատասխան վարչական շրջանի ղեկավարի կողմից սույն Կանոններով սահմանված պահանջներին համապատասխան տրված թույլտվություն, որի մասին նշում է կատարվում անասնաբուժական անձնագրում:

7) **անասնաբույժ**՝ Երևան քաղաքում անասնաբուժական գործունեություն իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձ:

8) **համայնքային կազմակերպություն**՝ «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, որն իրականացնում է Երևան քաղաքում թափառող կենդանիների անասնաբուժական սպասարկման, կենդանիների հաշվառման էլեկտրոնային համակարգի ստեղծման և վարման, համայնքում անկաճ կենդանիների հավաքման, սահմանված վայրում թաղման կամ դիակիզման աշխատանքներ:

## II. ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻ ՊԱՀՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 4. Պահողն իրավունք ունի՝

1) անասնաբույժից անվճար ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն՝ կենդանուն հաշվառելու և պահելու հետ կապված հարցերի վերաբերյալ,

2) ըստ բնակության վայրի՝ Երևան քաղաքի համապատասխան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմից անվճար տեղեկություններ ստանալ այն վայրերի մասին, որտեղ իրավունք ունի կազմակերպել կենդանու զբոսանքը:

### 5. Տնային կենդանի ձեռք բերելիս Պահողը ստանձնում է հետևյալ պարտականությունները՝

1) պահպանել «Անասնաբուժության մասին» օրենքի 34 և 35 հոդվածներով և սույն Կանոններով սահմանված պահանջները,

2) 6 շաբաթականից մեծ հասակ ունեցող կենդանի ձեռք բերելիս Պահողից պահանջել կենդանու անասնաբուժական անձնագիրը,

3) 6 շաբաթականից մեծ հասակի դեպքում ձեռք բերելուց հետո 7-օրյա ժամկետում իրականացնել կենդանու՝ սույն Կանոններին համապատասխան հաշվառումը,

4) պահպանել կենդանուն պահելու սանիտարահիգիենիկ կանոնները, այդ թվում՝ տարեկան առնվազն մեկ անգամ կամ անասնաբույժի ցուցումով սահմանված հաճախականությամբ ապահովել կենդանու անասնաբուժական զննությունը, տարեկան պատվաստումը կատարողության դեմ և ընդհանուր պատվաստումը,

5) իր կենդանու կողմից մեկ այլ կենդանու վնաս պատճառվելու դեպքում անհապաղ ձեռնարկել միջոցներ՝ վնասի պատճառումը դադարեցնելու, ինչպես նաև պատճառված վնասի հետևանքները վերացնելու, այդ թվում՝ տուժած կենդանուն համապատասխան բուժօգնության ցուցաբերումն ապահովելու ուղղությամբ,

6) անասնաբույժին անհապաղ հայտնել կենդանու կողմից մարդու կամ այլ կենդանու առողջությանը վնաս հասցնելու մասին՝ կենդանուն տեղափոխելով մոտակա անասնաբույժի մոտ՝ զննման և կարանտինային հսկողություն իրականացնելու համար,

- 7) անասնաբույժին անհապաղ հայտնել կենդանու կարանտինային, հատուկ վտանգավոր և պարտադիր ծանուցման ենթակա հիվանդությունների, այդ թվում՝ կատաղության հիվանդության կասկածի մասին և մեկուսացնել կենդանուն՝ մինչ անասնաբուժական զննությունը,
- 8) բացառել կենդանու կողմից ընդհանուր օգտագործման հողերի, այդ թվում՝ բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների, բակերի, մայթերի, փողոցների, սիգամարգերի, մանկական խաղահրապարակների, ինչպես նաև ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների աղտոտումը,
- 9) կենդանուն պահելուց հրաժարվելու դեպքում այլ փոխանցել այլ անձի կամ կենդանիների կացարան կամ մասնագիտացված կազմակերպություններին: Արգելվում է կենդանուն թողնել առանց հսկողության կամ բաց թողնել ազատության մեջ,
- 10) ապահովել յուրաքանչյուր անձի անվտանգությունը և անդորրը կենդանու ազդեցությունից, այդ թվում՝ մարդաշատ վայրերում զբոսանքի ժամանակ դնչկալի կամ վնասագերծման այլ միջոցների օգտագործումը:

### **III. ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

6. Սույն կանոնների պահանջների նկատմամբ հսկողությունը և դրանց կատարման ապահովումն իրականացնում են Երևան քաղաքի համապատասխան վարչական շրջանների ղեկավարները:

7. Վարչական շրջանի ղեկավարը՝

1) տրամադրում է տվյալ վարչական շրջանում տնային կենդանիների պահման թույլտվություններ՝ համապատասխան հաշվառման տեղեկությունները գրանցելով Կենդանիների հաշվառման էլեկտրոնային տեղեկատվական համակարգում,

2) սույն Կանոններով սահմանված պահանջների խախտման համար անձանց ենթարկում է պատասխանատվության՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված կարգով:

### **IV. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ԶԲՈՍԱՆՔԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ**

8. Ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են կենդանիներ պահելիս հաշվի առնել այդ կենդանիների կենսաբանական և անհատական առանձնահատկությունները, պահպանել «Անասնաբուժության մասին» և այլ օրենքներով, ինչպես նաև սույն Կանոններով սահմանված պահանջները:

9. Բազմաբնակարան շենքերում կենդանիներ մշտապես կամ ժամանակավորապես պահելիս պետք է ապահովվեն մարդկանց և կենդանիների կյանքի բարենպաստ պայմաններ:

10. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքներում կենդանիներ պահելն արգելվում է:

11. Կենդանիների զբոսանքը թույլատրվում է միայն այդ նպատակով հատուկ հատկացված տարածքներում: Նման տարածքների բացակայության դեպքում զբոսանքը կարող է իրականացվել ամայի կամ խոտածածկ տարածքներում, բացառությամբ կրթական, մշակութային, սպորտային, առողջապահական կազմակերպություններին (հիմնարկներին) հարող տարածքների, մանկական հրապարակների և շուկաների տարածքների:

12. Շան զբոսանքի ժամանակ Պահողը պետք է ապահովի մոտակայքում գտնվող անձանց անվտանգությունը:

13. Շան զբոսանքի ժամանակ Պահողը պարտավոր է՝

1) շանը նրա պահման տարածքից դուրս բերել կամ ներս տանել կապով, որի երկարությունը թույլ է տալիս հսկել շան վարքը: Մարդկանց և ուրիշ կենդանիներին սպառնացող շները (մարտական, ծառայողական, պարեկային և այլ ցեղատեսակի շներ, որոնք կարող են լինել ագրեսիվ և վտանգավոր մարդու կամ այլ կենդանու կյանքի կամ առողջության համար, այսուհետ՝ պոտենցիալ վտանգավոր շուն) պետք է ունենան դնչկալներ: Պոտենցիալ վտանգավոր շների ցանկը սահմանվում է Երևանի քաղաքապետի որոշմամբ,

2) պոտենցիալ վտանգավոր շանը պահել դնչկալով՝ մայթերով շարժման ժամանակ, հետիոտնի ճանապարհին, ընդհանուր օգտագործման ավտոտրանսպորտային միջոցներով և տաքսի ավտոմեքենաներով տեղափոխելիս, մարդաշատ վայրերում և երթևեկության հատման մասերում:

Բնակելի թաղամասերում պոտենցիալ վտանգավոր շների զբոսանքը թույլատրվում է իրականացնել միայն դնչկալի և կապի առկայության դեպքում:

Հասարակական վայրերում Պահողը պետք է պոտենցիալ վտանգավոր շանը պահի կարճ կապի վրա և դնչկալով,

3) առանց դնչկալի և կապի շանը զբոսանքի տանելու առանձնացված վայրերը սահմանվում են Երևանի քաղաքապետի որոշմամբ:

14. Ճանապարհը կամ երթևեկելի մասն անցնելիս, ինչպես նաև մայրուղիների մոտ՝ ճանապարհային պատահարների կանխման նպատակով, Պահողը պարտավոր է կենդանուն պահել կարճ կապի վրա:

15. Պահողները պարտավոր են թույլ չտալ մայթերի կամ այլ հանրային օգտագործման տարածքների աղտոտումը կենդանու զբոսանքի ընթացքում, ինչպես նաև պարտավոր են մաքրել իրենց կենդանիների կենսագործունեության արդյունքները:

16. Շներ պահողներն իրավունք ունեն դրանց ազատ արձակել միայն իրենց սեփականության, տիրապետման կամ օգտագործման ներքո գտնվող հատուկ առանձնացված տարածքներում կամ մեկուսացված շինություններում:

17. Պոտենցիալ վտանգավոր 2 ամսականից մեծ շներ Պահողները պարտավոր են անձամբ անցնել նման շների հետ վարվելու հատուկ դասընթաց, շանը տալ ընդհանուր վարժեցման և ունենալ այս գործողությունների կատարումը հաստատող համապատասխան վկայագրեր՝ տրամադրված կինոլոգիական կազմակերպությունների կողմից:

18. Պահողներն իրավունք ունեն կենդանիներին տեղափոխել քաղաքային տրանսպորտով: Կենդանիները պետք է քաղաքային տրանսպորտով փոխադրվեն կարճ կապով և դնչկալով, բացառությամբ փոքր դեկորատիվ ցեղատեսակների և փոքր, առանց ցեղատեսակի շների և կատուների, որոնք տեղափոխվում են պայուսակներում կամ տեղափոխման համար հարմարեցված սարքերում:

19. Արգելվում է՝

1) կենդանիների երկարատև կամ մշտապես պահումը տրանսպորտային միջոցներում,

2) շանը զբոսանքի տանելը մանկական խաղահրապարակներում, մանկական այգիներում, զբոսայգիներում, առողջապահական, կրթական, մշակութային, սպորտի հիմնարկների և շուկաների տարածքներում,

3) ակոնիոլային խմիչք օգտագործած անձանց և 18 տարին չլրացած անչափահասներին՝ 15 կիլոգրամից ավելի քաշ ունեցող շներին զբոսանքի տանելը,

4) կենդանիների հետ խանութներ, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների օբյեկտներ, բժշկական, կրթական և մշակութային հաստատություններ այցելելը, բացառությամբ կենդանիների ցուցադրության կամ համանման այլ միջոցառումների այցելության դեպքերի:

**V. ՏՆՍՅԻՆ ԿԵՆՂԱՆԻ ՊԱՀԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ  
ԿԱՆՈՆՆԵՐԸ**

20. Երևան քաղաքում տնային կենդանի պահող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապահովել իր կենդանու հաշվառումը և ձեռք բերել տնային կենդանի պահելու թույլտվություն:

21. Երևան քաղաքում վեց շաբաթական հասակից մեծ տնային կենդանիները հաշվառման ենթակա են ձեռք բերելուց հետո՝ 7 օրվա ընթացքում:

22. Կենդանու հաշվառումը կատարվում է 18 տարին լրացած ֆիզիկական անձի, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ դրա գործադիր մարմնի ղեկավարի կամ լիազորված անձի դիմումի հիման վրա:

23. Տնային կենդանի պահողները կենդանու հաշվառման և կենդանի պահելու թույլտվություն ստանալու նպատակով պարտավոր են դիմել անասնաբույժի և ձեռք բերել կենդանու անասնաբուժական անձնագիր:

24. Կենդանու անասնաբուժական անձնագրի տրամադրումը մերժվում է, եթե պահողը.

- 1) չի ներկայացրել հաշվառվող կենդանուն,
- 2) հրաժարվում է կենդանու նկատմամբ անասնաբուժական պարտադիր միջոցառումների իրականացումից,
- 3) չեն ներկայացվել պոտենցիալ վտանգավոր կենդանի Պահողի կողմից հատուկ դասընթաց անցնելու և վարժեցվածության մասին վկայագրեր:

25. Տնային կենդանիների հաշվառմանը ներկայացվող պահանջներն են՝

- 1) անասնաբուժական անձնագրի տրամադրումը՝ համաձայն Ձև 1-ում սահմանված ձևաչափի, որը տրվում է անասնաբույժի կողմից,
- 2) կենդանու նույնականացման ապահովումը՝ միկրոչիպի տեղադրման կամ կենդանու մարմնի որոշակի հատվածում նույնականացման համարի դաջվածքի կատարման միջոցով: Կենդանիների վրա տեղադրվող միկրոչիպը պետք է համապատասխանի ԻՍՕ 11784 և ԻՍՕ 11785 միջազգային ստանդարտներին, ունենա մինչև 13 մմ երկարություն և 2 մմ տրամագիծ, տեղակայված լինի կենսաապակուց պատրաստված պատիճի մեջ, որը կենդանու օրգանիզմի համար անվնաս է և ներարկվում է ներմաշկային եղանակով՝ մեկանգամյա օգտագործման համար նախատեսված հատուկ ներարկիչի միջոցով: Միկրոչիպի ընթերցումը կատարվում է տեսաձրիչի միջոցով (պահելով այն 15սմ - 1մ հեռավորության վրա), որը էկրանի վրա ցուցադրում է կենդանու անհատական համարը.
- 3) կենդանու հաշվառման մասին բոլոր տվյալների մուտքագրումը Կենդանիների հաշվառման էլեկտրոնային տեղեկատվական համակարգում, որը ստեղծում, կենտրոնացված կարգով վարում և սպասարկում է համայնքային կազմակերպությունը: Համայնքային կազմակերպությունն ապահովում է վարչական շրջանների ղեկավարների կողմից կենդանիների հաշվառման տվյալների մուտքագրման հնարավորությունը, հաշվառման համակարգումը և հաշվառման տվյալների վերլուծությունը:

26. Հաշվառման և կենդանի պահելու թույլտվություն ստանալու նպատակով Պահողը պարտավոր է դիմել կենդանուն պահելու վայրին համապատասխան Երևան քաղաքի վարչական շրջանի ղեկավարին, ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

1) Երևան քաղաքի ավագանու որոշմամբ տվյալ օրացուցային տարվա համար սահմանված տեղական տուրքի վճարման անդորրագիրը, եթե տվյալ տարվա համար գրոյական արտոնություն սահմանված չէ,

2) համայնքային կամ իր նախընտրած անասնաբուժական սպասարկում իրականացնող կազմակերպությունում կենդանու հաշվառումն ապահովելուց հետո ստացված կենդանու անձնագիրը՝ համաձայն Ձև 1-ի,

3) լրացված հայտը՝ համաձայն Ձև 2-ի:

27. Պահողը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ մինչև կենդանու անկումը, սահմանված ժամկետում վճարել Երևան քաղաքի ավագանու որոշմամբ տվյալ օրացուցային տարվա համար սահմանված տեղական տուրքի վճարը և վարչական շրջան ներկայացնել կենդանու անձնագիրը, որից հետո տրամադրված թույլտվության ժամկետը համարվում է երկարացված, իսկ հաշվառման տվյալները՝ թարմացված:

28. Կենդանիների հաշվառման էլեկտրոնային տեղեկատվական համակարգում նշվում են հետևյալ տեղեկությունները՝

1) անասնաբուժական անձնագրի հերթական համարը և հաշվառման տարեթիվը,

2) Պահողի անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն, էլ. փոստը, հեռախոսահամարը,

3) կենդանու գունավոր նկարը, ցեղատեսակը, անունը, սեռը, գույնը, ծննդյան թիվը (եթե հայտնի է), մորթու տեսակը, գունավորումներ և տարբերանշաններ,

4) կենդանու նույնականացման համարը և տեղադրման եղանակը, այդ թվում՝ չիպավորման կամ դաջվածքի կատարման ամսաթիվը, տեղադրությունը,

5) Պահողի մոտ գտնվող կենդանիների թվաքանակը,

6) յուրաքանչյուր պատվաստման մասին տեղեկությունները՝ պատվաստման տեսակը, ամսաթիվը, օգտագործված պատվաստանյութը, հաջորդ պատվաստման ամսաթիվը, պատվաստող անասնաբույժի անունը, ազգանունը,

7) հիվանդությունների պատմությունը՝ յուրաքանչյուր հիվանդության համար նշելով ամսաթիվը, անասնաբուժական նշումները, բուժող անասնաբույժի անունը, ազգանունը,

8) ալերգիկ ռեակցիաները՝ ամսաթիվ, ալերգիկ ռեակցիա, անասնաբույժի անունը, ազգանունը,

9) մշակում էկոտպարագիտների (լվերի, տզերի, մոծակների) դեմ՝ ամսաթիվ, դեղորայք, անասնաբույժի անունը, ազգանունը,

10) Ճիճվաթափություն՝ ամսաթիվ, դեղորայք, չափաբաժին, անասնաբույժի անունը, ազգանունը,

11) կենդանի պահելու թույլտվության համարը և ամսաթիվը, պահելու վայրի հասցեն:

29. Կենդանու հաշվառման ժամանակ պահողը պետք է ծանուցվի սույն Կանոնների պահանջների մասին:

30. Տնային կենդանի պահելու թույլտվության տրամադրումը կարող է մերժվել, եթե՝

1) Պահողի կողմից ներկայացված տվյալներն արժանահավատ չեն.

2) կենդանու հաշվառումը պատշաճ կարգով չի իրականացվել.

3) տվյալ վայրում կենդանի պահելը կարող է հանգեցնել հասարակական կարգի կամ այլոց իրավունքների խախտման.

4) առկա են սույն Կանոններով սահմանված պահանջների խախտումներ:

31. Եթե կենդանի պահելու թույլտվության տրամադրումը մերժվում է, ապա Պահողը պարտավոր է մեկամսյա ժամկետում վերացնել մերժման հիմքերը և կրկին դիմել թույլտվություն ստանալու համար, կամ կենդանուն հանձնել համայնքային կենդանիների կացարան, կամ օտարել կենդանուն այլ անձի:

32. Կենդանու անկման դեպքում Պահողը պարտավոր է անհապաղ այդ մասին տեղեկացնել համայնքային կազմակերպությանը և կենդանուն սպասարկող անասնաբույժին հայտնել կենդանու

անձնագրի և նույնականացման համարը, ինչի հիման վրա կենդանու մասին տեղեկությունները հանվում են Կենդանիների հաշվառման էլեկտրոնային տեղեկատվական համակարգից:

33. Կենդանուն այլ անձի հանձնելու դեպքում նոր Պահողին են հանձնվում կենդանու անասնաբուժական անձնագիրը՝ կենդանու հետագա վերահաշվառում իրականացնելու և թույլտվություն ձեռք բերելու համար:

34. Եթե Պահողը կենդանու անձնագրում և Կենդանիների հաշվառման էլեկտրոնային տեղեկատվական համակարգում հայտնաբերում է գրանցումների անճշտություն կամ անձնագիրը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի, ապա անձնագրի փոխարինման և անճշտությունների շտկման համար դիմում է անասնաբույժին՝ ներկայացնելով փոխարինման ենթակա անձնագիրը:

35. Անձնագրի կորստի դեպքում՝ Պահողը 7 օրվա ընթացքում դիմում է անասնաբույժին և ստանում նոր անձնագիր: Նոր անձնագրում պետք է լինի «Կրկնօրինակ» նշումը:

36. Անասնաբույժը վնասված կամ կորած անձնագրի փոխարեն նոր անձնագիրը տալիս է 3-օրյա ժամկետում: Նոր տրված անձնագրում պետք է գրանցվեն նախկին անձնագրում ամրագրված՝ կենդանու նույնականացման համարը, ինչպես նաև տվյալներ իրականացված անասնաբուժական միջոցառումների մասին:

## **VI. ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

37. Երևան քաղաքում տնային կենդանիների հաշվառումը և անասնաբուժական սպասարկումն իրականացվում են անասնաբույժի միջոցով:

38. Տնային կենդանիների անասնաբուժական պարտադիր միջոցառումները իրականացվում են ԳՕՍՏ Ռ 58090 ստանդարտով սահմանված պահանջներին համապատասխան:

39. Վարչական շրջանների ղեկավարները և համայնքային կազմակերպությունը յուրաքանչյուր տարի՝ մինչև փետրվարի 15-ը Երևանի քաղաքապետին են ներկայացնում Երևան քաղաքում տնային կենդանիներ պահելու թույլտվությունների տրամադրման և դրանց հաշվառման վերաբերյալ տարեկան հաշվետվություն:

40. Արգելվում է կենդանիների թաղումը կամ դիակիզումը չնախատեսված վայրերում:



ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԻ ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐ

Անասնաբուժական անձնագրի հերթական համար

Հաշվառման տարեթիվ

Անասնաբուժական հաստատություն

Բժիշկ անասնաբույժ

Պահող

Անուն Ազգանուն կամ անվանում

Բնակության կամ գտնվելու վայրի հասցե՝

Հեռ.

Էլ. փոստ

Պահողի մոտ գտնվող կենդանիների թվաքանակը

Նկարագրություն՝

Կենդանու տեսակը (շուն կամ կատու)

Անուն

Սեռը

Ծննդյան ամսաթիվ

Ցեղատեսակ

Գույնը

Նույնականացման №

Նույնականացման համարի փակցման եղանակը (միկրոչիպ, դաջվածք, այլ) \_\_\_\_\_

Համարակալման ամսաթիվ

Տեղադրություն

Լուսանկարներ՝ դիմային և կողային

**Պատվաստում**

Ես, ներքոստորագրյալս, հանդիսանալով բժիշկ անասնաբույժ, սույնով հաստատում եմ, որ այս անձնագրի 3-րդ էջում նկարագրված կենդանին պատվաստվել է կատաղության դեմ, և որ պատվաստման պահին կենդանին եղել է կլինիկորեն առողջ:

**Պատվաստում կատաղության դեմ**

Ամսաթիվ	Օգտագործված պատվաստանյութ	Հաջորդ պատվ.	Բժիշկ անասնաբույժի ստ.
1	2	3	4

**Այլ պատվաստումներ**

Ամսաթիվ	Օգտագործված պատվաստանյութ	Հաջորդ պատվ.	Բժիշկ անասնաբույժի ստ.
1	2	3	4

**Հիվանդության պատմություն**

Ամսաթիվ	Անասնաբուժական նշումներ	Բժիշկ անասնաբույժի ստ.
1	2	3

**Ալերգիկ ռեակցիաներ**

Ամսաթիվ	Ալերգիկ ռեակցիաներ	Բժիշկ անասնաբույժի ստ.
1	2	3

**Մշակում էկոտոպարազիտների (լվերի, սզերի, մոծակների) դեմ**

Ամսաթիվ	Դեղորայք	Բժիշկ անասնաբույժի ստ.
1	2	3

**Ճիճվաթափություն**

Ամսաթիվ	Դեղորայք	Չափաբաժին	Բժիշկ անասնաբույժի ստ.
1	2	3	4

Ես, ներքոստորագրյալս, հանդիսանալով տնային կենդանու պահող, սույնով հաստատում եմ, որ կենդանու հաշվառման ժամանակ ծանուցվել եմ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՀՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021թ N°312Ն որոշման պահանջներին:

Պահող՝ \_\_\_\_\_ Անուն, Ազգանուն

**ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻ ՊԱՎԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N»**

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ**

\_\_\_\_\_ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Տրամադրման ամսաթիվ՝

Կենդանու պահման վայրի հասցե՝

**ԴՐՈՇՄԱԿՆԻՔԻ ՏԵՂԸ**

ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻ ՊԱՀԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ

ՀԱՅՏ

ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

ՊԱՐՈՆ/ՏԻԿԻՆ

Քաղաքացու անունը, ազգանունը, հայրանունը կամ իրավաբանական անձի անվանումը և տնօրենի/լիազորված անձի անունը, ազգանունը, հայրանունը \_\_\_\_\_

Բնակության կամ գտնվելու վայրի հասցե՝ \_\_\_\_\_

Հեռ.՝ \_\_\_\_\_

Էլ. փոստ \_\_\_\_\_

Խնդրում եմ ինձ (իրավաբանական անձի դեպքում նշել անվանումը) տրամադրել \_\_\_\_\_ հասցեում տնային կենդանի պահելու թույլտվություն:

(Բերել վայրի նկարագրությունը՝ բնակարան, անհատական բնակելի տուն: Նկարագրել կենդանուն պահելու վայրը՝ բացօթյա, բնակարանում, ազատ արձակված կամ կապի վրա և այլն)

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Կից ներկայացնում եմ՝

ա) Երևան քաղաքի ավագանու որոշմամբ տվյալ օրացուցային տարվա համար սահմանված տեղական տուրքի վճարման անդորրագիրը (եթե տվյալ տարվա համար զրոյական արտոնություն սահմանված չէ),

բ) կենդանու անձնագիրը՝ հաշվառման մասին պահանջվող տեղեկատվությամբ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ նշված վայրում ունեմ/չունեմ (նշել) այլ կենդանիներ (նշել կենդանիների տեսակները և քանակը)՝

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_:

Նշված հասցեում բնակվում է \_\_\_\_\_ մարդ:

Առդիր՝ ... էջ:

Դիմողի ստորագրություն \_\_\_\_\_

Ամսաթիվ՝ \_\_\_\_\_ »:

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N312-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հոկտեմբերի 24-ի «Երևան քաղաքում ընտանի կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները հաստատելու մասին» N312-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը բխում է այն փաստից, որ ընդունված կանոնները մինչ այժմ հնարավոր չի եղել արդյունավետ կերպով իրականացնել: Մասնավորապես, տվյալ կանոններով բաց են մնացել տնային կենդանիների պահման թույլտվությունների տրամադրման, տնային կենդանիների հաշվառման, անասնաբուժական սպասարկման ընթացակարգերի սահմանումը:

«Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 34 հոդվածի 2-րդ մասի 7 կետի համաձայն՝ կենդանի պահողն իր ցանկությամբ կարող է ընտրել շան նույնականացման նպատակով միկրոչիպի կամ դաշվածքի տեղադրումը: Հաշվառման այս մոտեցումները սակայն մինչ այժմ որևէ կերպ չի կիրառվել, ինչի հետևանքով տնային կենդանիների հաշվին թափառող կենդանիների թվաքանակի աճը հնարավոր չի լինում վերահսկել:

Նախագծի մշակման ժամանակ հաշվի են առնվել գործող օրենսդրության մի շարք նորմեր և պահանջներ, մասնավորապես՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով, 49 հոդվածի 1 մասի 2 կետով և 50 հոդվածի 1 մասի 2 կետով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12 հոդվածի 1 մասի 33 կետով և 58 հոդվածով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9 հոդվածի 1 մասի 13 կետով և 12 հոդվածի 1 մասի 13 կետով և «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9, 17, 20, 34 և 35 հոդվածներով սահմանված պահանջները:

Նախագծի ընդունումը թույլ կտա Երևան քաղաքում ապահովել տնային կենդանիների հաշվառման և դրանց պահման թույլտվությունների տրամադրման հստակ ընթացակարգ, ինչով կապահովվի բնակչության անվտանգությունը և պաշտպանվածությունն անասնաբուժական սպասարկում չանցած տնային կենդանիներից:

Նախագիծն ուղարկվել է կարծիքների Հայաստանի Հանրապետության արդարադատություն, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության սննդամթերքի և տեսչական մարմին: Նախագիծը լրամշակվել է հաշվի առնելով ստացված բոլոր կարծիքները:

Լրամշակված նախագիծը հանրային քննարկման է դրվել իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում 04.08.2021-19.08.2021 ժամանակահատվածում, որի վերաբերյալ կարծիքներ չկան:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,  
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌԸՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ  
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՄ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«2021 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ  
ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«2021 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,  
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

**ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ**

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N312-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հ/Հ	Առաջարկության, առարկության հեղինակը	Առաջարկության, առարկության բովանդակությունը	Նշումներ
1.	Երևանի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողով	<p>1. Որոշման նախագծի հավելվածի վերնագիրը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ Երևան քաղաքում տնային կենդանիների պահման կանոնները հաստատելու մասին:</p> <p>2. Որոշման նախագծի հավելվածի 27-րդ կետում առաջարկվել է, որ Պահողը պարտավոր է յուրաքանչյուր տարի ներկայացնի կենդանու անձնագիրը՝ հաշվառման տվյալները թարմացնելու համար:</p> <p>3. Որոշման նախագծի հավելվածի 32-րդ կետում առաջարկվել է, որ Պահողը պարտավոր է կենդանու անկման դեպքում անհապաղ այդ մասին տեղեկացնի նաև կենդանուն սպասարկող անասնաբույժին:</p> <p>4. Որոշման նախագծի 37-րդ կետը հանել:</p>	<p>1. Ընդունվել է:</p> <p>2. Ընդունվել է:</p> <p>3. Ընդունվել է:</p> <p>4. Ընդունվել է:</p>

		<p>5. VII գլուխը հանել:</p> <p>6. Հավելվածի VI գլխում ավելացնել հետևյալ կետը. 40. (նախկին 41-րդ կետ) Արգելվում է կենդանիների թաղումը կամ դիակիզումը չնախատեսված վայրերում:</p> <p>7. Առաջարկվում է անասնաբույժերին տալ հասանելիություն իրենց մոտ բուժվող կենդանու էլեկտրոնային բժշկական թերթիկում կատարելու բացառապես իրենց բժշկական միջամտության վերաբերյալ գրառումներ:</p>	<p>5. Ընդունվել է:</p> <p>6. Ընդունվել է:</p> <p>7. Չի ընդունվել: Ներկայումս տեխնիկապես հնարավոր չէ իրականացնել, հաշվի առնելով անձնական տվյալների պահպանության ապահովումը:</p> <p>Լրամշակված նախագիծը կցվում է:</p>
--	--	--	---

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**



## Ամփոփաթերթ

«Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հոկտեմբերի 24-ի N312-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»  
Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

h/h	Առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
1	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, 04/06/2021	<p>«Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հոկտեմբերի 24-ի N312-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) նախաբանում բացակայում է այն լիազորող նորմը, որը հնարավորություն է ընձեռում ավագանուն ընդունել սույն որոշումը:</p> <p>Նախագծի նախաբանից առաջարկում ենք հանել «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» օրենքի 3-րդ հոդվածին կատարված հղումը, քանի որ դա Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով լիազորող նորմ չի հանդիսանում:</p> <p>Նախագծի նախաբանում առաջարկում են հղում կատարել Օրենքի 33-րդ հոդվածին:</p>	Ընդունվել է մասամբ:	<p>Խմբագրվել է: Նախաբանում որպես լիազորող նորմ բերվում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը, համաձայն որի՝ «1.Նորմատիվ իրավական ակտերում փոփոխություն կամ լրացում կատարում է միայն այդ նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմինը կամ նրա իրավահաջորդը:»</p> <p>«Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» օրենքի 3-րդ հոդվածին կատարված հղումը հանվել է:</p> <p>Օրենքի 33-րդ հոդվածը սահմանում է իրավական ակտերում փոփոխություններ կատարելու կանոնների վերաբերյալ նորմեր և այդ իմաստով լիազորող նորմեր չի պարունակում:</p>
2	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, 04/06/2021	Նախագծի 1-ին և 2-րդ կետերը նախատեսում են վերնագիրը և հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ, ուստի նկատի ունենալով Օրենքի 13-րդ հոդվածի պահանջները՝ առաջարկում ենք այս վերնագրով ընդունել նոր իրավական ակտ, քանի որ գործող որոշման նախաբանում կատարված հղումները այսպիսի ակտ ընդունելու ուղղակի նորմեր չեն պարունակում:	Ընդունվել է, նախագիծը խմբագրվել է:	
3		Նախագծի 1-ին և 2-րդ կետերում «24 հոկտեմբերի 2011 թվականի» բառերի դասավորվածությունը	Ընդունվել է:	Կատարվել է համապատասխան խմբագրում:

		անհրաժեշտ է վերանայել՝ հիմք ընդունելով Նախագծի վերնագրի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները, այն է՝ <i>ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են այդ ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, ակտի վերնագիրը, ակտի հերթական համարը, բնույթը և տեսակը:</i>		
4		Նախագծի 2-րդ կետում «խմբագրությամբ» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «համաձայն հավելվածի» բառերը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ առաջարկվող փոփոխությունները կատարվում են կից ներկայացված հավելվածում: Սույն դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջներից, այն է՝ <i>նորմատիվ իրավական ակտով հաստատվող կանոնները, կանոնադրությունները, կարգերը, ցանկերը, աղյուսակները և այլն ամրագրվում են (կամ ձևակերպվում են) նորմատիվ իրավական ակտի անբաժանելի մաս համարվող հավելվածների ձևով:</i>	Ընդունվել է:	
5	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, 04/06/2021	<i>Նախագծով հաստատվող «Երևան քաղաքում տնային կենդանիների պահման, հաշվառման և անասնաբուժական սպասարկման կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 1-ին կետում «տնային կենդանիներին» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «(այսուհետ՝ Կենդանի)» բառերը: Բնչպես նաև անհրաժեշտ է հստակեցնել «վարչական տարածքում գտնվող» ձևակերպումը:</i>	Ընդունվել է:	
6		Կարգի 2-րդ կետում «կենդանիներին օգտագործող» հասկացությունը բավարար չափով պարզաբանված չէ, և այդ առումով այն անհրաժեշտ է հստակեցնել:	Ընդունվել է:	Տվյալ հասկացությունն արդեն իսկ գործածվում է օրենսդրությամբ, օրինակ՝ Քաղաքացիական օրենսգրքի 1071 <sup>2</sup> հոդվածի 1-ին մաս:
7		Կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետում «կենդանու	Ընդունվել է:	Ձևակերպումը հանվել է:

		մասին հոգ տանող» ձևակերպումը հստակեցման կարիք ունի:		
8		Կարգի 3-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված կարգավորումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Անասնաբուժության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներին, այն է՝ <b>կենդանիների համարակալում՝ գյուղատնտեսական կենդանիների (բացառությամբ թռչունների, մեղուների) և տնային կենդանիների ականջներին կողմնորոշված տեղեկություն պարունակող հատուկ պիտակների կամ մարմնի որոշակի մասերին էլեկտրոնային չիպերի՝ կրիչների ամրացում, որը հնարավորություն է ընձեռում անհատականացնելու և հաշվառելու կենդանիներին:</b>	Ընդունվել է:	Կարգավորումը հիմնված է «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի դրույթների վրա: Նախագծով նախատեսվում են «Կենդանիների նույնականացում» և «հաշվառում» հասկացությունները, որոնք տարբերվում են պարզապես «համարակալման» հասկացությունից, քանի որ նույնակացման դեպքում անհատականացման համարները հաշվառվում են էլեկտրոնային համակարգում, որի շնորհիվ հնարավոր է կենդանուն նույնականացնել:
9	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, 04/06/2021	Կարգի 3-րդ կետի 4-րդ ենթակետում անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչ իրավական ակտով է նախատեսվում զննության իրականացման կարգը, ինչպես նաև հստակեցնել՝ ինչ հերթականությամբ է իրականացվելու մինչ անձնագրի տրամադրումը նախատեսվող գործողությունները:	Չի ընդունվել:	Զննության կարգը սահմանվում է 42-րդ կետով:
10		Կարգի 3-րդ կետի 5-րդ ենթակետում անհրաժեշտ է նշել այն իրավական ակտը, որով սահմանված են անձնագրի ձևաչափն ու տեսքը:	Չի ընդունվել:	Անձնագրի ձևաչափն ու տեսքը որևէ իրավական ակտով չի սահմանվում: Նախագծի կարգով սահմանվում է անձնագրի ձևաչափը՝ համաձայն Ձև1-ի, որը մշակվել է ներկայումս կիրառվող անձնագրերի հիման վրա:
11		Կարգի 3-րդ կետի 7-րդ ենթակետով նախատեսվում է հետևյալ կարգավորումը՝ <b>անասնաբույժ՝ Երևան քաղաքում անասնաբուժական գործունեություն իրականացնող՝ համայնքն սպասարկող անասնաբույժ, որը կարող է լինել իրավաբանական կամ ֆիզիկական անձ:</b> Առաջարկում ենք վերոնշյալ կարգավորումը խմբագրել, քանի որ տառացի մեկնաբանման կանոնը կիրառելու պարագայում ստացվում է, որ	Ընդունվել է:	Նշված կետերը համապատասխանաբար խմբագրվել են:

		անասնաբույժ կարող է լինել նաև իրավաբանական անձը, մինչդեռ իրավաբանական անձը կարող է լինել միայն անասնաբուժական գործունեություն իրականացնող: Ըստ այդմ էլ՝ անհրաժեշտ կլինի համապատասխան խմբագրումներ կատարել նաև Կարգի 40-րդ կետում:		
12	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, 04/06/2021	Կարգի 3-րդ կետի 8-րդ ենթակետով նախատեսվում է հետևյալ կարգավորումը՝ <i>համայնքային կազմակերպություն՝ Երևան քաղաքում տնային և թափառող կենդանիների անասնաբուժական սպասարկման, կենդանիների հաշվառման էլեկտրոնային համակարգի ստեղծման և վարման, համայնքում անկաժ կենդանիները հավաքագրման, վնասազերծման, սահմանված վայրում թաղման կամ դիակիզման աշխատանքներ իրականացնող համայնքային կազմակերպություն:</i> Ստացվում է, որ համայնքային կազմակերպությունը որոշակի գործունեություն իրականացնող համայնքային կազմակերպություն է: Կրկնաբանությունից խուսափելու համար առաջարկում ենք վերոնշյալ կարգավորումը խմբագրել: Նույն դիտողությունը վերաբերում է Կարգի 5-րդ կետի 10-րդ ենթակետով նախատեսված կարգավորմանը: Միաժամանակ անհրաժեշտ է հստակեցնել խոսքը համայնքային կոնկրետ, թե ցանկացած կազմակերպության մասին է, ինչպես նաև «սահմանված վայր» ձևակերպումը, մասնավորապես՝ նշել, թե ում կողմից և ինչ իրավական ակտով է այն սահմանված:	Ընդունվել է:	Նախագծի կարգի նշված կետերը համապատասխանաբար խմբագրվել են:
13	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, 04/06/2021	Կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետը անհրաժեշտ է խմբագրել, մասնավորապես՝ նշել, թե վարչական շրջանի որ ստորաբաժանումից կարելի է ստանալ համապատասխան տեղեկությունները:	Ընդունվել է:	Հստակեցվել է:
14	04/06/2021	Կարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետում անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչպես է դրսևորվելու	Չի ընդունվել:	

		կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքին նպաստելը և աջակցելը:		
15		Կարգի 5-րդ կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ ենթակետերով սահմանված պարտականությունները անհրաժեշտ է համապատասխանեցնել «Անասնաբուժության մասին» օրենքի 34-րդ և 35-րդ հոդվածների դրույթներին: Մույն դիտողությունը վերաբերում է նաև Կարգի 13-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ, 20-րդ կետերին: Միաժամանակ հարկ է նշել, որ ինչպես վերոնշյալ, այնպես էլ Կարգի այլ դրույթներով նախատեսված են պարտականություններ և արգելքներ, մինչդեռ բացակայում են դրանց չկատարման կամ խախտման համար պատասխանատվության վերաբերյալ կարգավորումները:	Ընդունվել է:  Չի ընդունվել:	Կարգով սահմանված նորմերը ոչ թե կրկնում են «Անասնաբուժության մասին» օրենքի դրույթները, այլ լրացնում և հստակեցնում են դրանք:  Պատասխանատվության վերաբերյալ կարգավորումները սահմանված են «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենքի 113 և 219 <sup>1</sup> հոդվածների դրույթներով:
16	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, 04/06/2021	Կարգի 5-րդ կետի 3-րդ ենթակետում նախատեսված է վերահաշվառում իրականացնելու պարտականություն, մինչդեռ «Անասնաբուժության մասին» օրենքում բացակայում են վերահաշվառման վերաբերյալ կարգավորումները: Այս առումով՝ վերոնշյալ ենթակետը խմբագրման կարիք ունի:	Ընդունվել:	Ենթակետը խմբագրվել է:
17		Կարգի 5-րդ կետի 5-րդ ենթակետով տնային կենդանի պահողի համար նախատեսվում է պարտականություն՝ <i>իր կենդանու կողմից մեկ այլ կենդանու վնաս պատճառելու դեպքում անհապաղ ձեռնարկել միջոցներ՝ վնասի պատճառումը դադարեցնելու, ինչպես նաև պատճառված վնասի հետևանքները վերացնելու, այդ թվում՝ տուժած կենդանուն համապատասխան բուժօգնության ցուցաբերումն ապահովելու ուղղությամբ:</i> Այս կարգավորումը առաջարկում ենք խմբագրել և դիտարկել նաև կենդանու կողմից ընդհանրապես վնաս պատճառելու դեպքը համապատասխանեցնելով նաև Քաղաքացիական օրենսգրքի 1071 <sup>2</sup> -րդ հոդվածի 1-ին մասի	Չի ընդունվել:	Նորմը կրկնելու կարիք չկա, քանի որ արդեն իսկ սահմանված է: Բացի այդ «վնասի հատուցումը» և «վնասի հետևանքների վերացումը» միմյանցից տարբերվող հասկացություններ են:

		<p>դրույթներին, մասնավորապես՝ <i>կենդանու պատճառած վնասի հատուցման պարտականությունը կրում է այդ կենդանու սեփականատերը, բացառությամբ այլ անձի տիրապետմանը կամ օգտագործմանը կամ խնամքին հանձնված կենդանու կողմից պատճառված վնասի, որի դեպքում վնասի հատուցման պարտականությունը կրում է կենդանուն տիրապետողը կամ օգտագործողը կամ խնամողը (...):</i></p>		
18	<p>Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, 04/06/2021</p>	<p>Կարգի 5-րդ կետի 8-րդ ենթակետում անհրաժեշտ է հստակեցնել «ընդհանուր օգտագործման տարածքներ» ձևակերպումը:</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>«Ընդհանուր օգտագործման տարածքներ» արտահայտությունը փոխարինվել է «ընդհանուր օգտագործման հողեր» արտահայտությամբ՝ համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 10 հոդվածի 7 մասի:</p>
19		<p>Կարգի 7-րդ կետի ա) ենթակետով սահմանված կարգավորումը անհրաժեշտ է համապատասխանեցնել Կարգի 3-րդ կետի 6-րդ ենթակետի դրույթներին՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ 3-րդ կետի 6-րդ ենթակետում խոսք է գնում թույլտվություն տալու մասին, մինչդեռ 7-րդ կետի ա) ենթակետում խոսվում է թույլտվության տրամադրման ապահովման մասին:</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Տեքստը խմբագրվել է:</p>
20		<p>Կարգի 7-րդ կետի ենթակետերի համարակալումը անհրաժեշտ է վերանայել՝ համապատասխանեցնելով Օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին, այն է՝ <i>ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում դրույթները շարադրվում են հերթական համար ունեցող կետերի տեսքով: Կետերը կարող են բաժանվել միայն համարակալված ենթակետերի, իսկ ենթակետերը՝ միայն համարակալված պարբերությունների: Կետերը համարակալվում են արաբական թվանշաններով, որոնք տեքստից բաժանվում են միջակետով: Ենթակետերը համարակալվում են արաբական թվանշաններով, որոնք տեքստից բաժանվում են փակագծով:</i></p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Համարակալումը խմբագրվել է:</p>

		Պարբերությունները համարակալվում են հայերենի այբուբենի փոքրատառերով, որոնք տեքստից բաժանվում են միջակետով: Սույն դիտողությունը վերաբերում է նաև Կարգի 27-րդ, 31-րդ և 32-րդ կետերին:		
21	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, 04/06/2021	Կարգի 4-րդ գլխով նախատեսված են վաճառքի կանոնների վերաբերյալ դրույթներ, ինչը դուրս է գալիս տվյալ իրավական ակտի կարգավորման առարկայի շրջանակից: Այս առումով անհրաժեշտ է խմբագրել վաճառքի կանոններին վերաբերող դրույթները՝ նկատի ունենալով Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, այն է՝ <i>նորմատիվ իրավական ակտի կարգավորումը չպետք է դուրս գա իր առարկայի շրջանակներից</i> : Սույն դիտողությունը վերաբերում է նաև Կարգի 6-րդ գլխին:	Ընդունվել է:	Տեքստը խմբագրվել է, համապատասխան կետերը հանվել են:
22		Կարգի 8-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել «օրենսդրությունը» հասկացությունը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ այն լայն հասկացություն է, մասնավորապես՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն <i>օրենսդրություն է համարվում օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ամբողջությունը</i> : Ինչպես նաև անհրաժեշտ է հստակեցնել, թե անձանց որ իրավունքների և օրինական շահերի մասին է խոսքը:	Ընդունվել է:	Տեքստը խմբագրվել է:
23	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, 04/06/2021	Կարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետով և 13-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ, 20-րդ, 22-րդ, 31-րդ, 32-րդ կետերով ամրագրված կարգավորումներն վերաբերում են պահողի պարտականություններին: Այս առումով՝ առաջարկում ենք վերոնշյալ կարգավորումները նախատեսել Կարգի 5-րդ կետում՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ կետով են սահմանված պահողի ընդհանուր պարտականությունները:	Չի ընդունվել:	Թեև նշված դրույթներում ընդհանուր առմամբ նշվում է «պարտավոր է» բառը, սակայն դրանք պարունակում են տարբեր բնույթի իրավակարգավորումներ: Մասնավորապես, մի դեպքում դրանք վերաբերում են կենդանիների պահման կանոններին, մյուս դեպքում՝ հաշվառման և թույլտվության ձեռքբերման կարգին: Դրանց միատեղումը Կարգը կդարձնի առավել խրթին ընթերցման համար:
24		Կարգի 20-րդ կետով նախատեսված են քաղաքային տրանսպորտով շների	Ընդունվել է:	Կետը խմբագրվել է:

		տեղափոխման կանոնները: Առաջարկում ենք այս կարգավորումը տարածել նաև կատուների վրա, որովհետև նրանք ևս կարող են հանդիսանալ վտանգի աղբյուր:		
25		Կարգի 21-րդ կետով սահմանված արգելքներն անհրաժեշտ է խմբագրել և համապատասխանեցնել «Անասնաբուժության մասին» օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, ինչպես նաև Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետն անհրաժեշտ է հստակեցնել:	Ընդունվել է մասամբ:	Կարգի 21-րդ կետը խմբագրվել է, անհարկի կրկնությունը բացառելու համար հանվել են «Անասնաբուժության մասին» օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:
26		Կարգի 21-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ընդհանրապես արգելվում է կենդանիների օգտագործումը ներկայացումներին, մինչդեռ նույն կետի 8-րդ ենթակետում արդեն հստակեցվում է, թե ինչպիսի ներկայացումներին է արգելվում: Հետևաբար՝ առաջարկում ենք միանման այս կարգավորումները նախատեսել մեկ ենթակետի տեսքով՝ համապատասխանեցնելով նաև «Անասնաբուժության մասին» օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջներին, համաձայն որոնց՝ <i>արգելվում է կռիվների կամ ներկայացումների համար կենդանիների օգտագործումը, որի արդյունքում կենդանին կարող է տանջվել, սպանվել կամ ստանալ կենսագործունեությանը սպառնացող վնասվածք:</i>	Ընդունվել է:	Խմբագրվել է:
27	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, 04/06/2021	Կարգի 21-րդ կետի 6-րդ ենթակետն անհրաժեշտ է խմբագրել, քանի որ, եթե 18 տարին չլրացած անչափահասին չի արգելվում շուն պահել, չի էլ կարող արգելվել շանը զբոսանքի տանելը՝ նկատի ունենալով, որ նման կարգավորում նախատեսելու իրավական հիմքը նաև բացակայում է «Անասնաբուժության մասին» օրենքում: Տարիքային սահմանափակման մասով համապատասխան խմբագրում անհրաժեշտ է կատարել նաև Կարգի 25-րդ կետում:	Չի ընդունվել:	Կարգավորումը չի նախատեսվում նշված օրենքով, սակայն անվտանգության նկատառումներից ելնելով նման կարգավորման նախատեսումն անհրաժեշտ է:
28		Կարգի 27-րդ կետի բ) ենթակետով նախատեսված կարգավորումն անհրաժեշտ է հստակեցնել, մասնավորապես՝ նշելով, թե խոսքը ինչ	Չի ընդունվել:	Խոսքը անասնաբուժական պարտադիր միջոցառումների մասին է, որոնք սահմանված են կարգի 42-րդ կետով:



		պարտադիր միջոցառումների մասին է և դրանք ինչ կարգով պետք է իրականացվեն:		
29	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, 04/06/2021	Կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետում «բնակության հասցե» բառերն անհրաժեշտ է փոխարինել «բնակության վայրի հասցե» բառերով՝ նկատի ունենալով «Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի պահանջները: Ինչպես նաև անհրաժեշտ է հստակեցնել նույն կետի 9-րդ ենթակետում առկա ձևակերպումը:	Ընդունվել է:	Խմբագրվել է:
30		Կարգի 31-րդ կետի բ) ենթակետի վերլուծությունից ստացվում է, որ պահողը կարող է համայնքային կամ իր նախընտրած անասնաբուժական սպասարկում իրականացնող կազմակերպությունում իրականացնել կենդանու հաշվառումը, մինչդեռ Կարգի 3-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ հաշվառումը իրականացվում է միայն համայնքային կազմակերպության կողմից: Այս առումով՝ հակասությունից խուսափելու համար անհրաժեշտ է Կարգի 31-րդ կետի բ) ենթակետը համապատասխանեցնել Կարգի 3-րդ կետի 8-րդ ենթակետի կարգավորմանը:	Չի ընդունվել:	Կարգի 3-րդ կետի 8-րդ ենթակետը տալիս է համայնքային կազմակերպության սահմանումը, որն ի թիվս այլ անասնաբույժերի կարող է իրականացնել հաշվառում համաձայն կարգի 26-րդ կետի:
31		Կարգի 32-րդ կետի գ) ենթակետում անհրաժեշտ է հստակեցնել, թե խոսքը ինչ իրավունքների խախտման մասին է:	Ընդունվել է:	Խոսքը հասարակական կարգի պահպանության հետ կապված իրավունքների մասին է:
32		Կարգի 32-րդ կետով սահմանված թույլտվության տրամադրման մերժման հիմքերը անհրաժեշտ է վերանայել, քանի որ պահողը հաշվառման ժամանակ իր միջոցների հաշվին անցնում է որոշակի ընթացակարգ, իսկ մերժման հիմքերը հստակ և որոշակի չեն, ինչը կարող է հանգեցնել անհիմն մերժման:	Ընդունվել է:	Հստակեցվել է:
33	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, 04/06/2021	Կարգի 32-րդ կետի ենթակետերից հետո շարադրվող տեքստի «սեղմ ժամկետում» արտահայտությունը անորոշ է, անհրաժեշտ է հստակեցնել և նշել կոնկրետ ժամկետ՝ տարակարծիք մեկնաբանություններից խուսափելու համար: Ինչպես նաև վերոնշյալ	Ընդունվել է:	Տեքստը խմբագրվել է:

		ենթակետը առաջարկում ենք համարակալել:		
34		Կարգի 35-րդ կետում անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչպես են բացահայտվելու անձշտությունները և ինչ կարգով են դրանք շտկվելու:	Չի ընդունվել:	Իրավական ակտի մշակման և ընդունման անհրաժեշտություն չկա:
35		Կարգի 36-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ կարգով է իրականացվելու նոր անձնագրի տրամադրումը:	Չի ընդունվել:	Իրավական ակտի մշակման և ընդունման անհրաժեշտություն չկա:
36		Կարգի 37-րդ կետում անհրաժեշտ է նշել, թե որ պահից է հաշվարկվելու 14-օրյա ժամկետը և անհատականացման ինչ համարների մասին է խոսքը:	Ընդունվել է:	Տեքստը խմբագրվել է:
37		Կարգի 40-րդ կետով սահմանված են անասնաբույժին վերաբերող պարտադիր պահանջները, մինչդեռ «Անասնաբուծության մասին» օրենքում առկա չէ նման որևէ պահանջ: Հետևաբար՝ անհրաժեշտ է նշել տվյալ կարգավորման իրավական հիմքը:	Ընդունվել է:	40-րդ կետը հանվել է:
38	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, 04/06/2021	Կարգի 40-րդ կետի դ) ենթակետում և 42-րդ կետում առկա հապավումներն անհրաժեշտ է բացել՝ նկատի ունենալով Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, այն է՝ <i>արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաև բառերի կամ տերմինների հապավումներ:</i>	Չի ընդունվել:	Կարգում նշվածը բառերի կամ տերմինների կրճատումներ չեն: Դա ստանդարտի նշագիր է: Ստանդարտների կիրառումը իրավական ակտերում սահմանվում է «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածով:
39		Կարգի 44-րդ կետում անհրաժեշտ է նշել, թե ինչ իրավական ակտով են սահմանված կենդանիների թաղման կամ դիակիզման վայրերը:	Ընդունվել է:	Որոշման նախագծում ավելացվել է նոր կետ:
40		Կարգով հաստատվող Ձև 1-ում անհրաժեշտ է «հասցե» բառը փոխարինել «բնակության կամ գտնվելու վայրի հասցե» բառերով, «անուն ազգանուն» բառերից հետո լրացնել «կամ անվանում» բառերը՝ նկատի ունենալով Կարգի 3-րդ կետի 2-րդ մասի պահանջները, համաձայն որի՝ <i>տնային կենդանի պահող կարող է լինել նաև իրավաբանական անձը:</i> Սույն դիտողությունը վերաբերում է նաև Կարգով հաստատվող Ձև 2-ում սահմանված համանման	Ընդունվել է:	Տեքստը խմբագրվել է:

		ձևակերպումներին: Ինչպես նաև անհրաժեշտ է Ձև 2-ում ամրագրված դրույթների համարակալումը վերանայել՝ համապատասխանեցնելով Օրենքի 14-րդ հոդվածի պահանջներին:		
41	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, 04/06/2021	Նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել նաև շահագրգիռ մարմինների հետ:	Ընդունվել է:	
1	Հայաստանի Հանրապետություն տարածքային կառավարման եվ ենթակառուցվածքների նախարարություն 12/07/2021	Առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է:	
1	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն 16/07/2021	Կարգի 3-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերում հստակեցման կարիք ունի «անասնաբուժական ծառայություն» բառակապակցությունը, քանի որ «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված է «անասնաբուժական ծառայություն» հասկացությունը	Չի ընդունվել:	Քանի որ նշված օրենքով սահմանվում է տվյալ հասկացությունը, հստակեցման որևէ կարիք չի առաջանում:
		Կարգի 3-րդ կետի 5-րդ ենթակետը առաջարկվում է խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «նույնականացման կամ անասնաբուժական անձնագիր՝ կենդանու ինքնությունը հաստատող հիմնական փաստաթուղթ՝ իր անհատական համարով և (կամ) միկրոչիպով, որը գործում է ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ հանրապետության սահմաններից դուրս»	Չի ընդունվել:	Առաջարկությունը հիմնավորված չէ և պարունակում է իրավական հակասություններ:
		Միաժամանակ հստակեցման կարիք ունի անասնաբուժական անձնագիրը տրամադրվում է վճարով, թե՛ անվճար և ում՞ կողմից է սահմանվելու վճարը,	Չի ընդունվել:	Անասնաբուժական անձնագրերը տրամադրվում են մասնավոր անասնաբույժերի կողմից, հետևաբար դրանք վճարովի են: Վճարի չափը որոշվում է մասնավորների կողմից:
		Առաջարկվում է Կարգի 3-րդ կետի 7-րդ ենթակետը հանել, քանի որ այն կարգավորվում է	Չի ընդունվել:	Օրենքով սահմանվում է «Համայնքն սպասարկող անասնաբույժ»

	Օրենքով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 58-րդ հոդվածով		հասկացությունը: «Անասնաբույժ» հասկացությունը սահմանված է Կարգում կիրառության իմաստով՝ ելնելով Օրենքով սահմանված դրույթներից:
	Կարգի 3-րդ կետի 8-րդ ենթակետով նախատեսվում է «կենդանիների հաշվառման էլեկտրոնային համակարգի ստեղծում և վարում», սույնով առաջարկվում է ապահովել նաև էլեկտրոնային տեղեկատվական հարթակի հասնելիությունը ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի համար, համաձայն Օրենքի 2-րդ հոդվածի,	Ընդունվել է մասամբ:	Ըստ էության, հաշվառման տվյալները գաղտնիք չեն պարունակում և կարող են հասանել լինել առցանց բոլորի համար: Համայնքը նաև կարող է հաշվառման տվյալները տրամադրել պետական մարմիններին՝ համապատասխան պահանջի դեպքում:
	Կարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետում առաջարկվում է հստակեցնել «պատասխանատու վերաբերմունքի դրսևորում» եզրույթը	Ընդունվել է մասամբ:	Հաշվի է առնվել «պատասխանատու վերաբերմունք» հասկացությունը արդեն իսկ կիրառվում է օրենսդրությամբ:
	Կարգի 5-րդ կետի 4-րդ ենթակետում առաջարկվում է «սանիտարահիգիենիկ» բառը փոխարինել «գոռհիգիենիկ» բառով, ինչպես նաև հիմնավորել «տարեկան պատվաստում կատաղության դեմ և ընդհանուր պատվաստում» եզրույթը, քանի որ պատվաստումներն իրականացվում են ըստ հասակային խմբի և անհրաժեշտության,	Չի ընդունվել:	
	Կարգի 5-րդ կետի 6-րդ ենթակետում առաջարկվում է «անասնաբույժի մոտ» բառերը փոխարինել «անասնաբուժական կլինիկա» բառերով,	Չի ընդունվել:	
	Կարգի 9-րդ կետից առաջարկվում է հանել «բազմաբնակարան շենքերում» բառերը, քանի որ կենդանիներ կարող են պահել ոչ միայն բազմաբնակարան շենքերում, այլ նաև առանձնատներում: Միաժամանակ առաջարկվում է «մարդկանց և կենդանիների կյանքի բարենպաստ պայմաններ» բառերը փոխարինել «կենդանիների և (կամ) մարդկանց առողջության պաշտպանության, ինչպես նաև կենդանիների բարեկեցության պահպանման	Չի ընդունվել:	

	պահանջները» բառերով,		
	Կարգի 12-րդ կետը և 19-րդ ենթակետը հստակեցման կարիք ունի,	Չի ընդունվել:	
	Կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետում առաջարկվում է հանել «ԻՍՕ 11784 և ԻՍՕ 11785» հղումները, քանի որ այն սահմանված չէ ավելի բարձր իրավական ակտով, համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 9-րդ հոդված 2-րդ մասին	Չի ընդունվել:	Ստանդարտների կիրառումը իրավական ակտերում սահմանվում է «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքով:
	Կարգի 32-րդ կետում «մահվան» բառը փոխարինել «անկման» բառով,	Ընդունվել է:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:
	Կարգի 40-րդ կետով նախատեսված «ԳՕՍ Ռ 58090» վերաբերում է կլինիկական հետազոտությունների ընդհանուր պահանջներին, այլ ոչ թե «պարտադիր միջոցառումների իրականացմանը», առաջարկվում է հանել ԳՕՍ-ի հղումը, քանի որ Օրենքի 34-րդ և 35-րդ հոդվածներով իրավակարգավորումները սահմանված են: Միաժամանակ տեղեկացնում են, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել է մի շարք օրենքների, այդ թվում նաև Օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մախագծեր, ինչով նախատեսվում է օրենքով կարգավորել անասնաբուժական գործունեության առանձին տեսակների իրականացման, անասնաբուժական կլինիկաների լիցենզավորման պահանջները,	Չի ընդունվել:	Օրենքը չի սահմանում կլինիկական հետազոտության ընթացակարգը:
	Համաձայն « նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 3-րդ հոդվածի՝ առաջարկվում է կազմ ներկայացնել հանրային քննարկման:		

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ